ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"11" դեկտեմբերի 2012թ № 181 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) ենթակետի, 1.16 կետի ա) ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի << ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012 թվականի ծախսերում կատարվող վերաբաշխումները՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ կնքել 2012 թվականի հունվարի 30-ին կնքված պայմանագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրեր:

3.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 11
ք. Կապան